

ՀԱՄ ԿԿ (Բ) ԱՆԻՐՅԵՐԿՈՍԻ ԿՈՒՆՏՄՐՈՒ ՔԱԺԻՆ

ԽՐՉԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

1933 թ. ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ

ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

374.2 աջ.
Խ-91

ՊԵՏՅՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ. 1933

374.2

Խ-91 48

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ 1933 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

I

Կուսակցութիւնը, բանվոր դասակարգը և կոլտնտեսականե-
րը ՀամԿ(բ)ԿԿ-ի հռչակարկան միացյալ պլենումից և դրանից հետո
ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի III նստաշրջանից ստացել են գլուղատըն-
տեսութեան սոցիալիստական վերակառուցման հետագա աշխա-
տանքների համար միանգամայն կոնկրետ ծրագիր, այն ել վոչ
միայն յերկրորդ հնգամյակում իրենց առաջ դրված հիմնական
հարցերը լուծելու, այլև այսորվա և վաղվա գործողութիւնների
ծրագրերը լուծելու համար:


Կուսակցութեան և խորհրդային իշխանութեան՝ ամենակարևոր
հարցը, վոր վերաբերում է գլուղին այժմ—յերկրորդ հնգամյակի
ստացին տարվա գարնանացանի բայլչեիկյան կազմակերպումն է:

1933 թվի գարնանացանից և կախված 1933 թվի—
յերկրորդ հնգամյակի առաջին տարվա—նորերս մեր ըն-
դունած Ժողովրդատնտեսութեան պլանի կատարումը, և
դրանից ել կախված է մեր հետագա հաղթանակների պլանը, ան-
դասակարգ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու պլանը:

Կոլտնտեսութիւնների բայլչեիկացման և ամրապնդման գոր-
ծում, աշխատանքը ճիշտ կազմակերպելու, աշխատանքային կար-
գապահութիւնը բարձրացնելու, աշխատանքի արտադրողականու-
թիւնը կոլտնտեսութիւններում հսկայական չափով բարձրացնե-
լու գործում ստալինիզմ դարունը հանդիսանալու յի վճռական դա-
րուն, վորոնց միմիայն հասնել կարելի յի ջախջախված, սակայն
վոչ դեռևս վերջնականապէս հաղթահարված դասակարգային թըշ-
նամու մնացորդների դիմադրութիւնը, սաբոտաժը և վնասարա-
րութիւնն անխնա կերպով վոչնչացնելով:

Անդրկովկասյան հանրապետութիւնների պայմաններում, ա-
ռաջիկա գարնանացանի կամպանիան բացառիկ կարևոր նշանակու-
թիւն է ստանում նաև այն պատճառով, վոր մեր յերկրի գարնա-
նացանի գոտու մեջ այնպիսի արժեքավոր տեխնիկական մշակույթ-

9742
է
509



ներ, ինչպես՝ բամբակը, թեյը, ծխախոտը և այլ մշակույթներն են, վորոնք սոցիալիստական արդյունաբերութեան համար հումք են հանդիսանում, հսկայական տեսակարար կշիռ ունեն նաև այն պատճառով, վոր հենց դարնանն անհրաժեշտ է լուծել կերի ամուր բազա ստեղծելու խնդիրը՝ այն անասնապահութեան համար, վորը նույնպես հանդիսանում է Անդրկովկասի դյուրատնտեսութեան հիմնական ճյուղերից մեկը, և ամենից ավելի այն պատճառով, վոր դյուրում մեր կատարած աշխատանքի այն բոլոր թերութիւնները, վոր իր ճառում կուսակցութեան առաջնորդ ընկեր Ստալինը մատնանշել է, այն թերութիւնները, վորոնց վերացումով կարելի յի կըլտնտեսութիւնների ամրացման և դյուրի հետագա կոլեկտիվացման գործում ունեցած հաղթանակները ապահովել, մեզ մոտ՝ Անդրկովկասում առանձնապես վառ, ցայտուն և սուր կերպով են արտահայտված :

Գարնանացանի հաջողութիւնն ամբողջապես կախված է լինելու այն բանից, թե կուսակցական և խորհրդային կազմակերպութիւնները, դյուրում առաջացած նոր պայմանների համեմատ, վորքան արագ կերպով կվերակառուցեն իրենց աշխատանքը, վորքան արագ կերպով նրանք կուղղեն այն թերութիւնները, վոր ընկ. Ստալինը մատնանշել է «դյուրի աշխատանքի մասին» իր ծրագրային ճառում :

Բաղ-լուսավորական հաստատութիւնների դյուրական ցանցը, և մասնավորապես խրճիթ-ընթերցարանը, վորպես գլուխի քաղաքացիական աշխատանքի կենտրոն, աշխատավոր մասսաներին կուսակցութեան և կառավարութեան վորոշումների շուրջը մորբիլիզացիայի յենթարկելու գործում, վոչ միայն այդ մասսաներին իրենց խնդիրները պարզաբանելու, այլև նրանց դատարարակելու, գիտութիւններով զինվելու և այդ խնդիրները կատարելու համար նրանց ուժերը համապատասխան կերպով կազմակերպելու գործում հանդիսանում է կուսակցութեան ձեռքում իբրև առաջնակարգ կարևորութիւն ունեցող յմակ և հոյր զենք :

Առաջիկա դարնանացանի կամպանիայի պատրաստութեան և կուլտուր-լուսավորական սպասարկման մեջ խրճիթ-ընթերցարանների և խրճիթվարների դերը պատասխանատու և չափազանց բարդ է, և ինքնըստինքյան հասկանալի յի, վոր նրանց աշխատանքն էլ ինչպես դյուրի բոլոր կազմակերպութիւններինը, դյուրում ստեղծված նոր պայմանների համեմատ, պետք է ամենավրճապական կերպով վերակառուցվի :

Անդրկովկասի խրճիթ-ընթերցարանները մեծ մասամբ վատ են աշխատում, նրանք դանդաղորեն ընթանում են մասսաների աճող կուլտուրական պահանջների պոչից և միանգամայն անբավարար են սպասարկում տնտեսական-քաղաքական կամպանիային, քիչ և վատ են ողնում կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը՝ նրանց առաջ դրված բարդ, դժվարին և չափազանց կարևոր խնդիրների կատարման գործում :

Սրճիթ-ընթերցարանների աշխատի վատ աշխատանքն առաջիկա աշնանը միանգամայն անհանդուրժելի կլինի :

Մեծագույն քաղաքական հանցագործութիւն կլինի հաշտվել աշխատանքի այդ բնագավառում իրերի գոյութիւն ունեցող դրութեան հետ : Հաշտվել խրճիթ-ընթերցարանի վատ աշխատանքի կամ նրա անգործութեան հետ այն ժամանակ, յերբ դասակարգային պայքարի բոլոր զենքերը պետք է լավ սրված և մարտի պատրաստ լինեն, հաշտվել կուլտուր-քաղաքական վատ աշխատանքի հետ, յերբ հերոսական պայքար ենք մղելու կուլտուրական ցանքի, բարձր բերքի համար, — այդ նշանակում է կուլակի, վնասարարի, նենդադուլ անողի (саботажник — սաբոտաժ) ջրադացին ջուր լըցնել, այդ նշանակում է յերևան բերել ամենակեղծ, աջ ոպորտունիզմ, կամ թե բոլորովին չհասկանալ դասակարգային պայքարի կարևորագույն միջոցների ձեռն ու մեթոդները և այդ միջոցները թերագնահատել :

Սրճիթ-ընթերցարանը թե՛ նախացանային և թե՛ ցանքային կամպանիայի սպասարկման համար պետք է լինի միանգամայն զինված : Սրճիթվարը պետք է իր աշխատանքի բնագավառի համար պատասխանատու լինի այնպես, ինչպես վոր կոլտնտեսութեան մեջ և դյուրում աշխատանքի տնտեսական-քաղաքական այլ բնագավառների բոլոր պատասխանատու կազմակերպիչներն ու կատարողները :

Այդ պատճառով էլ ճիշիթ-ընթերցարանների աշխատանքը պետք է վերակառուցի ամենակարծ ժամանակամիջոցում, ձեռաց, դարնանացանի կամպանիայի պատրաստութեան կուլտուրական սպասարկման կարևորագույն գործում անդադար և անխափան կերպով աշխատելով :

Շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպութիւնները (և առաջին հերթին շրջանային լուսբաժինը) լիապես պատասխանատու յեն խրճիթ-ընթերցարանները դարնանացանի կամպանիայի սպասարկման համար իր ժամանակին պատրաստե-

լու, խրճիթվարների կաղաքերը խառնարան ստուգելու և խրճիթ-
ընթերցարանների ղեկավարութունն ամրացնելու, ամբողջ կամ-
պանխայի ընթացքում խրճիթ-ընթերցարանների աշխատանքի ամե-
նորյա, ուղեբատիվ, քաղաքական ղեկավարութուն կազմակերպ-
ման համար:

Շրջանը պետք է ունենա կուսակցութան շրջկոմի և շրջործ-
կոմի կողմից հաստատված դարձանագրանի կամպանիային կուլ-
տուրական սպասարկման միասնական պլան: Շրջանը պետք է այդ
պլանն իր ժամանակին հասցնի յուրաքանչյուր խրճիթ-ընթերցար-
անի և նրանցից ամեն մեկին ոգնի՝ սպասարկվող դյուղի և կուլ-
տնտեսութան պայմաններում պլանը կոնկրետացնելու:

II

Խրճիթ-ընթերցարանի հիմնական խնդիրները դարձանագրանի
կամպանիայի կուլտուր-քաղաքական սպասարկման բնագավառում
հետևյալներն են.

1. Լանյորեն մասսայականացնել և պարզաբանել դյուղին վե-
րաբերող՝ կուսակցութան և խորհրդային իշխանութան վերջին
բոլոր վորոշումները և մանավանդ ՀամԿ(բ)Կ ԵԿ-ի և ԽՍՀՄ-ի
Կենտրոնական Կոմիտեի III նստաշրջանի վորոշումները: Քաղաքական պրո-
պագանդ և ազխտացիա մղել՝ մասնաներին մոբիլիզացիայի յե-
թարկելու, այդ վորոշումները կատարելու համար:
2. Լանյորեն ժողովրդականացնել և յուրաքանչյուր կուլտնտե-
սականի և աշխատավոր մենատնտեսի հասցնել 1933 թվի դարձա-
նագրանի կամպանիայի պլանները:
3. Կազմակերպել դարձանագրանի բոլոր նախապատրաստական աշխա-
տանքները կատարելու համար մղվելիք պայքարը:
4. Կազմակերպել տվյալ դյուղի, կուլտնտեսութան, յուրա-
քանչյուր կուլտնտեսական բրիգադի, կուլտնտեսականի և մենատն-
տեսի կողմից ցանքային պլանի կոնկրետ առաջադրութունների
կատարման համար մղվելիք պայքարը:
5. Ազդեցիկության ամենալայն պրոպագանդ կազմակերպել,
ազդեցիկումը հասցնելով յուրաքանչյուր կուլտնտեսականի և մե-
նատնտեսի և պայքար կազմակերպել կառավարութան սահմանած
ազդեցիկները կատարելու և բարձր բերքատվութան համար:
6. Գյուղի բոլոր կուլտուրական ուժերը քաշել դեպի դարձան
կամպանիայի խնդիրների կուլտուր-քաղաքական սպասարկումը,
ստեղծել խրճիթ-ընթերցարանի շուրջը կուլտուրական ախտիվ:

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐԿԱՐԱՆԵՆ ԻՐ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՅԵՎ ԱԳՐՈՆ-ՏԵՆԵՆԿԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՆ ՈՒ ՊՐՈՊԱԳԱՆԴ
ՊԵՏՔ Ե ԿԵՆՏՐՈՆԱՑՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ
ՀԱՐՑԵՐԻ ՅԵՎ ԼՈՋՈՒՆԳՆԵՐԻ ՎՐԱ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ
ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՆ Ե
ԶԱԽԶԱԽԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ
ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԶԳՈՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆԱՑԱՆԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ՅԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԸ

«Լենինիզմի տեսակետից, կուլտնտեսութունները, ինչպես և
խորհանտեսութունները, վերջում իբրև կազմակերպման ձև,
հանդիսանում են իբրև դեմք և միմիայն դեմք: Այդ դեմքը վորոշ
պայմաններում կարելի չի ուղղել հեղափոխութան դեմ: Այդ
դեմքը կարելի չի ուղղել հակահեղափոխութան դեմ: Նա
կարող է ծառայել բանվոր դասակարգին և դյուղացիութանը,
վորոշ պայմաններում կարող է ծառայել բանվոր դասակարգի և
դյուղացիութան թշնամիներին: Ամբողջ խնդիրն այն է, թե այդ
դեմքն ո՞ւմ ձևով է դրսևում և ո՞ւմ դեմ է նա ուղղվելու:

Այս բանն սխալ է հասկանալ դասակարգային բնադրով ա-
ռաջնորդվող բանվորների և դյուղացիների թշնամիները:

Այս բանը մեր կոմունիստներից վրձանք, դժբախտաբար, չեն
հասկանում: Յեվ հենց այն պատճառով, վոր մեր կոմունիստներից
վրձանք այդ հասարակ բանը չեն հասկացել, — հենց այդ պատճա-
ռով էլ մենք այժմ այն պատկերն ունենք, վոր մի շարք կուլտնտե-
սութուններում դործերը ղեկավարում են լավ ջողարկված հակա-

խորհրդային տարրերը, այնտեղ վնասարարութիւնն և նենգադուլ (սարտատժ) կազմակերպելով:

Գյուղում կատարած մեր աշխատանքի թերութիւններէ չորրորդ պատճառն այն է, վոր մեր մի շարք ընկերներ տեղերում չեն կարողանում կուլակութեան դեմ մղվող սպառարի ֆրոնտը վերակառուցել, չեն հասկանում, վոր դասակարգային թշնամու դեմքը վերջին ժամանակներս փոխվել է, դասակարգային թշնամու տակտիկան գյուղում փոխվել է և վոր դրա համեմատ ել պետք է փոխեն իրենց տակտիկան, վորպեսզի հաջողութեամբ ձեռ բերեն: Թշնամին փոխված դրութեանը հասկացել է, գյուղի նոր կարգերի ուժն ու գորութեանը հասկացել է և վերադասախորհել է, փոխելով իր տակտիկան,—կոլտնտեսականներէ դեմ վարած իր ուղղակի գրոհից անցել է հանդարտ քանդարարական աշխատանքի: Իսկ մենք այդ բանը չենք հասկացել, նոր հանդամանքները չենք դիտել և շարունակում ենք դասակարգային թշնամուն վորոնել այնտեղ, վորտեղ նա այլևս չկա, շարունակում ենք կուլակութեան դեմ պարզ սպառար մղելու հին տակտիկան, մինչդեռ նա, հենց այդ տակտիկան արդեն հնացել է:

Դասակարգային թշնամուն վորոնում են կոլտնտեսութեաններէից գուրս, վորոնում են այնպիսի մարդկանց կերպարանքով, վորոնք ունեն դադանային կերպարանք, հակայական ատամներ, հաստ մկ, խանչալը ձեռքին: Վորոնում են այն կուլակին, վորին մենք պրակատներէից դիտենք:

Սակայն վաղուց արդեն այդպիսի կուլակներ հրատարակում չկան: Գյուղում յեղած ներկայիս կուլակներն ու յենթակուլակները, ներկայիս հակախորհրդային տարրերը՝ դրանք մեծ մասամբ հանդիտ, «քաղցր» և համարյա թե «սուր» մարդիկն են: Դրանց կոլտնտեսութեաններէից հետու չպետք է վորոնել, դրանք նստած են հենց կոլտնտեսութեան մեջ և այդտեղ դրավում են պահեստապետներէ, տնտեսական մասի վարիչներէ, հաշվետարներէ, քարտուղարներէ և այլ պաշտոններ: Նրանք յերբեք չեն ասում—«կորչեն կոլտնտեսութեանները»: Նրանք կոլտնտեսութեաններէ «կողմն» են: Սակայն նրանք կոլտնտեսութեաններում այնպիսի սարտատժային ու վնասարար աշխատանք են կատարում, վոր կոլտնտեսութեանները դրանցից չեն բժշկվում: Նրանք յերբեք չեն ասում՝ «կորչի հացամթերումը»: Նրանք հացամթերումներէ «կողմն են»: Նրանք «միմիայն» դեմադողիաներ են սարքում և պահանջում են, վոր կոլտնտեսութեան անասնապահութեան ֆոնդ կազմի, յերբեք

անգամ ավելի, քան դործն այդ պահանջում է, վոր կոլտնտեսութեանն ասպահովադրական ֆոնդ կազմի, յերբեք անգամ ավելի, քան դործն այդ պահանջում է, վոր կոլտնտեսութեանը հասարակական սենդի համար բանխորին տա որական 6-ից մինչև 10 ֆունտ հաց և այլն: Հասկանալի յե, վոր հասարակական սենդի համար այդպիսի «ֆոնդեր» և հատուցումներ անելուց հետո, այդպիսի խաբերայական դեմադողիայից հետո կոլտնտեսութեան տնտեսական գորութեանը կթուլանա և հացամթերումներէ համար բան չի մնա:

Այդպիսի ճարտիկ թշնամուն նկատելու և դեմադողիայից չաղդվելու համար պետք է ունենալ հեղափոխական զգոնութեան, պետք է ընդունակ լինել թշնամուն դիմակադերծ անելու, կոլտնտեսականներին ցույց տալու նրա իսկական, հակահեղափոխական դեմքը: Սակայն շատ կան գյուղում այդպիսի հատկութեաններով ոժտված կոմունիստներ:

Հաճախ կոմունիստները վոչ միայն դիմակադերծ չեն անում այդպիսի դասակարգային թշնամիներին, այլ ընդհակառակն, իրենք նրանց խաբերայական դեմադողիային յենթարկվում են և դնում են նրանց պոչից:

Դասակարգային թշնամուն իր նոր դիմակով չնկատելով և չկարողանալով մերկացնել նրա ավագակային արարքները, մեր ընկերներէից վոմանք իրենց հանգստացնում են նրանով, թե իբր աշխարհիս յերեսին այլևս կուլակներ չկան, կուլակութեան իբրև դասակարգի վերացման հետևանքով գյուղում հակախորհրդային տարրերն արդեն վոչնչացված են, և վոր նկատի ունենալով այդ, կարելի յե հաշտվել «չեղոք» կոլտնտեսութեաններէ գոյութեան հետ, այն կոլտնտեսութեաններէ, վորոնք վոչ բայլելիկյան և վոչ ել հակախորհրդային տնտեսութեաններ են, վորոնք, սակայն այսպես ասած՝ տարերային կարգով պետք է անցնեն Խորհրդային իշխանութեան կողմը: Սակայն, ընկերներ, այդ մի մեծ մոլորութեան է: Կուլակները ջախջախված են, սակայն նրանք դեռևս ամբողջովին հաղթահարված չեն: Դեռ ավելին, նրանք այնքան ել շուտով չեն հաղթահարվի, յեթե կոմունիստները դանդաղ շարժվեն և բարեսիրտ վերաբերմունք ունենան, յենթադրելով, թե այսպես կոչված իրենց տարերային զարգացման կարգով կուլակներն իրենք դերեզման կմտնեն: Ինչ վերաբերում է «չեղոք» կոլտնտեսութեաններին, դրանք առհասարակ չկան և բնութեան մեջ չեն կարող լինել: «Չեղոք» կոլտնտեսութեաններն—այդ այն մարդկանց յերևակայութեանն է, վորոնց աչքեր են տրված նրա համար, վոր

վոչինչ չտեսնեն: Դասակարգային այս սուր պայքարի ժամանակ, վոր այժմ խորհրդային յերկրում զոյություն ունի, «չեղոք» կոլտնտեսությունները համար այլևս տեղ չկա, այդպիսի պայմաններում կոլտնտեսությունները կարող են լինել կամ բաշխչեկյան, կամ հակախորհրդային:

Յե՛վ յեթե մենք այս կամ այն կոլտնտեսություններում ղեկավարություն չունենք, այդ նշանակում է, վոր նրանց հակախորհրդային ասարեր են ղեկավարում: Դրանում վոչ մի կասկած չի նե՛լ չի կարող»:

(Համկ(բ) կ կԿ-ի և կվձ-ի միացյալ պլենումում Ի ՍՍԱԼԻՆԻ արտասանած նառից) .

ՄԵՌՆՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՔԱՄՈՒՆ ՏԱԼ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՎԱԶԱԿԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱԽՉԱԽԵԼ

ՑԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Ե ՑԱՆՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԸ

ԴԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՎՃՌԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՆ Ե

Հենց ցանքի նախապատրաստման ժամանակաշրջանում խորհրդային-ընթերցարանը պետք է յեռանդուն ժառանգական աշխատանք ծավալի:

Պետք է գիտենալ, վոր հենց ցանքը ժամանակին նախապատրաստելուց, պատրաստան քրացուցային ժամկետների խառնուրդի կատարումից և կախված ցանքի հաջողությունը:

Բացի այդ, վոչ մի բույս չպետք է մոռանալ, վոր ցանքի այդ նախապատրաստումը տեղի յն ունենալու կուլակային-կատարարչի տակա՛ն տարրերի մնացորդների դեմ կատարի դասակարգային պայքար ժղելու պայմաններում:

Հատկապես մենք, անդրկովկասյան աշխատողներս, պետք է հիշենք, վոր «մեռնող դասակարգերի մնացորդների դեմ մղվող պայքարի հարցերն անդրկովկասյան գյուղում ավելի սուր կերպով են դրված, քան Միության մի շարք այլ շրջաններում. այդ պատճառով էլ կԿ-ի պլենումի դիրեկտիվներն այստեղ ունեն առանձնահատուկ, բացառիկ նշանակություն և սրություն (Մեյերզոն):

ԱՆԽՆԱ ՀԱՐՎԱԾԵ՛ՆՔ ԿՈՒԼԱԿԻՆ, ՎՆԱՍՍՐԱՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈՃԱՆԴԱԿՈՂՆԵՐԻՆ

Ցանքի պատրաստության կարևորագույն խնդիրները, վորոնց վրա խրճիթ-ընթերցարանը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի, հանդիսանում են՝

1. Ազահովել կոլտնտեսականների, կոլտնտեսությունների բանվորների և դեռևս կոլտնտեսություն չմտած չքավոր ժենատերտեսների ու միջակների լայն մասաների մասնակցությունը գարնանացանի կամպանիային: Առանց այդ մասաների մասնակցության անհնարին է կուլակային տարրերի, նրանց աջ ուղորդող նախաձեռնողների դիմադրությունը ջախջախել, հետևապես և անհնարին կլինի հաջող կերպով կատարել ցանքի պլանները:

2. Պլանը մտասաների՛ն: Այս է խրճիթ-ընթերցարանի հաջորդ խնդիրը: Կազմակերպել՝ պլանը յուրաքանչյուր կոլտնտեսականին, բրիգադին, մենամանուսին հասցնելու գործը, այդ պլանները, դրանց բողոքական և տնտեսական նշանակությունը նրանց բացատրել—այս է, ճիշտն ասած, մասաներին ցանքի մարտական խրճիթների շուրջը մոբիլիզացիայի յենթակերպելու և կազմակերպելու հիմնական ուղին:

3. Հիշել, վոր հատուկ նշանակություն ունի մեռնողների

մեջ կատարվող մասսայական աշխատանքը, և առանձնապես մեզ մոտ՝ Անդրկովկասում, ուր նրանք կազմում են ցանձարարների 50 տոկոսից ավելին: Նրանց բացատրելու և համոզելու միջոցով պետք է մոբիլիզացիայի յենթարկել՝ ցանքի պլանը և արտադրանքը պետությունը համաձայնությամբ յուրենները լիովին և անպայման կատարելու համար:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿՍՄՊԱՆԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒ- ԹՅԱՆԸ ՅՈՒՅՑ ՏԱԼ ԲՅՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՈՊԵՐԱ- ՏԻՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

4. Յանքի սերմը և բանող անասունի կերը ցանքի ճախայտաբաստման կարևորագույն բնագավառներն են:

Այս բնագավառում դասակարգային թշնամու դեմ կատարել պայքար է սեղի ունենալու: Խրճիթ-ընթերցարանը պետք է լայն մասսային բացատրի, վոր պետություն կողմից սերմի ողնություն հասցնելու մասին խոսք լինել անգամ չի կարող, սերմերը պետք է հավաքեն և ցանեն իրենք՝ կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և մենատնտեսները: Կուլակին ու հակախորհրդային տարրերին իրենց բոլոր ջանքերը դնելու յեն, վորպեսզի սերմերը ցանելու նենգազուլ (սարտատ) կազմակերպեն»:

ԹՈՒՅԼԱՏՐԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՂՈՒ-
ԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ, — ԽՈՍՔԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Ե ՊԵ-
ՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ, ԹԵ՞ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅԵՎ ԿՈՂՏՆՏԵՍՍ-
ԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ԱՅՊ ՄԻԵՎՆՈՒՅՆՆ Ե, — ՅԵՎ ՆՄԱՆ ՀԱ-
ԿԱՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՔԻՑ ԱՆՅՆԵԼ, —
ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե՝ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ-
ԻՐԵՎ ԻՐ ԲԱԶՄՅԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ — ԽՈՂՀՐԴԱՅԻՆ ԿՈՐԳԵՐԻ
ՔԱՅՔԱՑՄԱՆԸ:

Ի. ՍՏԱԼԻՆ

Այնուհետև նրանք կաշխատեն կազմակերպել հավաքած սերմերի հախճաղումն ու վոչնչացումը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր գրամ սերմանյութի վրա արթուն հսկողություն ունենալ և սերմերի պահպանությունն ապահովել ստուգված լավագույն կոլտնտեսականներով:

Սերմահավաքը պետք է ցույց տա, թե արդյոք տվյալ կայտքետեսությունը բայիլիկյա՞ն կոլտնտեսություն է:

Խրճիթ-ընթերցարանը պետք է ամենաանողը պայքար հայտարարի սերմերն իր ժամանակին հավաքելու և ցանելու դանդաղության և դրանց նշանակությունը թերագնահատելու դեմ, պետք է մերկացնի աջ ոպորտունիստներին, դասակարգային թշնամու և ժանդակողներին, — իսանի լիակատար սերմնացանության:

ԶԱԽՉԱԽԵԼ ՅԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒ- ԹՅԱՆ ՄԵՉ ՆԿԱՏՎՈՂ ՍԱԲՈՏԱԺԻ ԱՄԵՆ ՄԻ ՅԵՐԵՎՈՒՅԹ

5. Տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և գործիչների նորագույն և պահեստի մասերով նրանց ապահովելը գարնան ամբողջ պատրաստության վնասկան բնագավառներից մեկն է համարվում:

Մրտնից ել խնդիր է առաջանում խրճիթ-ընթերցարանի ակտիվ ուժերը հրապարակ հանել պայքար մղելու՝ իր ժամանակին նորոգություն կատարելու, նորոգության բարձր վորակի, տրակտորները վառելանյութով և յուղով ապահովելու համար:

Մեզ մոտ՝ ԱՍՅՆՀ-ի մեջ բամբակի ամբողջ ցանքը կատարվում է տրակտորային և ձիաքարչ շարքացան մեքենաներով:

Մեզ մոտ ցանելիք սերմերը դառնու համար կան բավականաչափ սերմադառիչ մեքենաներ:

Այդ տրակտորները, ցանող, տեսակավորող, սերմադառիչ մեքենաները, դռթանները և այլն պետք է լիակատար կերպով պատրաստ լինեն բարձր բերք ստանալու համար պայքար մղելու:

Մարտի 1-ին գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը պետք է ամբողջովին կարգի բերված լինի:

ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ՝ ԲԱՑ ԹՈՂԱԾ ՅՈՒՐԱՔԱՆ-
ՉՅՈՒՐ ՈՐԸ ՄԻ ՀԱՐՎԱԾ Ե ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆԸ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՍԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՉԱՅՆԵԼ
ԺԱՄԱՆԱԿԻՆ

6. Բանոյ անատուրը զարնանացանին պատրաստելը, նրա խնամքը լավացնելը, վիճակի վերաբերյալ արթուն հսկողութիւն ունենալը և նրա կերն ուժեղացնելը ցանքի պլանները կատարելու կարևորագույն պայման են:

Խրճիթ-ընթերցարանը պետք է պայքարի բանող անասունի վերաբերյալ անասնաբուժական հսկողութիւն ունենալու, անասունին խնամելու գործում ղեկավարութիւնը վերացնելու, ճիւղերը և յեղները բրիգադների, կոնկրետ անձնավորութիւնների ամբողջ-նելու, ամենաարթուն, ամենողոն հսկողութիւն ունենալու, անասունը կուլակային վնասարարութիւնից պահպանելու համար:

7. Սերմերը ցանքի համար պատրաստելը, նրանց գտելը, տեսակավորելը, հականեխելը—բարձր բերքի յերաշխիքն են:

Ագրոտեխնիկական պրոպագանդի լայն ծավալումով խրճիթ-ընթերցարանը պետք է հասնի այն նպատակին, վոր կոլտնտեսու-թիւններն ու մենաստեանները վոչ մի գրամ չզտված հատիկ հողի մեջ չզգնեն, վոր բոլոր սերմերը հականեխված լինեն, վոր բացա-րապէս ընտիր սերմեր ցանվեն:

Անհրաժեշտ է ցանքարարներին բացատրել, թե այդ միջոցա-նումները վորչա՞նի բարձրացնում են բերքատվութիւնը և, ընդ-հակառակն, թե ի՞նչ հակառակ վնասներ են հասցնում մոլախո-տերը, մրիկը և բերքի այլ վնասատուները, վորոնք մեծ մասամբ չզտված և չհականեխված սերմերի արդյունք են:

Սերմնահատիկի զտումն ու հականեխումը բոլորի համար պարտադիր պետք է լինի:

8. Սերմի պատրաստութիւն մեջ վճռական նշանակութիւն ու-նի կոլտնտեսութիւններում արտադրութիւնը և աշխատանքի ճիշտ կերպով կազմակերպելու հարցը:

Չափազանց կարևոր նշանակութիւն ունի կոլտնտեսութիւն-ներում մշտական արտադրական բրիգադներ կազմակերպելը:

Խրճիթ-ընթերցարանը պետք է իր ամբողջ ուժերով նպաստի աշ-խատանքի կազմակերպման այդ ձևի ամրացմանը, պետք է ոգնի բրիգադների համար արտադրական գրաֆիկ մշակելու, նրանց աշխատանքները հաշվառման յենթարկելու և պլանավորելու, պետք է ոգնի բրիգադների ճիշտ կազմ ընտրելու և մասնաշախկան-քաղա-քական, կուլտուր-դաստիարակչական ամբողջ աշխատանքի ծան-րութիւն կենտրոնը տեղափոխելու ուղղակի բրիգադները, խրճիթ-ընթերցարանի սկիտիվ լավագույն ուժերն ամրացնելով մշտական բրիգադներին:

9. Սոցիալիստական ամենալայն մրցակցութիւն ծախալել կոլ-տնտեսութիւնների, մշտական բրիգադների, մենատնտեսների մեջ,—ցանքի լավագույն պատրաստութիւն, վաղաժամ և դերվա-ղաժամ ցանք կատարելու, ագրոկանոնները լիակատար կերպով կատարելու, շարքացանի համար և վնասատուների դեմ պայքար մղելու աշխատանքի բարձրորակ ցուցանիշների, աշխատանքային բարձր կարգապահութիւն համար և այլն:

Ամենից լավ է հարվածային ցանքարարներից՝ խրճիթ-ընթեր-ցարանին կից կազմակերպել սոցիալիստական մրցակցութիւն շտաբ, լայնորեն այդ աշխատանքի մեջ քաշել կոմյունիստութիւնը, վորն լատ ելութիւն պետք է դառնա սոցիալիստութիւն և հարվածայ-նութիւն առաջամարտիկն ու վորի ներշնչողը, պիտոնները պետք է քաշվեն սոցիալիստութիւն ցուցանիշները հաշվի առնելու աշխա-տանքի մեջ:

Խրճիթ-ընթերցարանը պարնանացանի կամպանիայի պլանը կատարելու ամբողջ պայքարը պետք է մղի աշխատանքի սոցիա-լիստական մեթոդները կենսազորեցնելու տեսանկյունով: Խրճիթ-ընթերցարանն իր ամբողջ ազիտացիան պետք է կառուցի լավա-գույն կոլտնտեսութիւնների և կոլտնտեսականների դրական վոր-ձը շոշափելի կերպով ցուցադրելու վրա՝ հետ մնացածներին առաջ քաշելու և բոլորին սոցիալիստական մրցակցութիւն և հարվածայ-նութիւն մեջ ներգրավելու համար:

10. Խրճիթ-ընթերցարանը պետք է պայքար ծախալի կոլտն-տեսութիւններում ամուր և յերկաթե կարգապահութիւն մտցնե-լու համար:

«Աշխատանքի պրոտարդակախութիւն—վերջին հաշվով այդ անկեղծարեւորը և անկեղծիտվորն է նոր հասարակարգի հաղ-թանակի համար» (Լենին):

Խրճիթ-ընթերցարանը պետք է անխնա կերպով խարազանի ան-դործներին, դատարկապորտներին, կորզողներին, ծուլերին՝ վոր-պէս կուլակների և վնասարարների կամակատարների:

Առանց աշխատանքային ամուր կարգապահութիւն և դեպի կոլտնտեսական աշխատանքը դիտակից վերաբերմունք ստեղծելու, չի կարելի անգամ յերազել կոլտնտեսութիւնների ամրացման, ցանքի կամպանիայի պլաները կատարելու մասին: «Սոցիալ տնտե-սութիւնը կարող է գոյութիւն ունենալ միմիայն կարգապահու-թիւնը պահպանելու դեպքում, վորովհետեւ այդ տնտեսութիւնը

հիմնված և բազմաթիվ մարդկանց և մեքենաների աշխատանքի դուրսդրման վրա» :

Մի մարդու անբարեխիղճ աշխատանքը, բրիգադի մեկ անդամի պարանոցը կարող է բազմաթիվ մարդկանց և ամբողջ բրիգադի աշխատանքը վիժեցնել և կանգնեցնել :

11. Աշխատանքային կարգապահությունն ամրացնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, աշխատանքի սոցիալիստական ձևերը—սոցմրցակցությունն ու հարվածայնությունը, դատարկապորտաների, գործալիքների և կորդուրների դեմ մղվող պայքարը—ճիշտ կերպով կազմակերպելու և կիրառելու հետ միասին հսկայական դեր է խաղում աշխատանքի ճիշտ նորմավորումը, մշակման և գնահատման ճիշտ նորմաների սահմանելը—աշխուրթի հարցը :

Հասկապես մեծ ուժադրություն դարձնել աշխատավորների ընկերական կարգապահությունը զարգացնելու, ամրապնդելու յե՛վ ամեն կերպ նրանց ինքնագործունեությունն ու սլասախանասվության գիտակցությունը բարձրացնելու վրա: Այդ է՛ կապիտալիզմը յե՛վ արտադրության միջոցների մասնավոր սեփականության սիրապետությամբ սեղծված սովորույթները հաղթահարելու ամենագլխավոր, յեթե վոյ միակ միջոցը:

ԼԵՆԻՆ

Խրճիթ-ընթերցարանն այդ հարցում կարող է կոլտնտեսությունը հսկայական ծառայություններ մատուցել՝ ոգնելով նրան իր ակտիվի, դպրոցական-կոմյերխտականների և պիտեբնների ուժերով, կոլտնտեսականների աշխատանքը ճիշտ հաշվառման յենթարկելով, ցուցակավարներին (տարելչչիկ) և հաշվետարներին հաշիվ սովորեցնելով, ոգնելով կոլտնտեսությունը հակահեղափոխական տարրերից մաքրելու գործում, վորոնք աշխատանքի հենց այդ պատասխանատու պոստերն են խցկվում՝ կոլտնտեսությունը քայքայելու նպատակով :

9446
ԿՏ
509

ԱՇԽԱՏԱՆԿԱՅԻՆ ԱՄՈՒԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐՈՒՏԱՐԵ-ԿԱՆ ԱՄՈՒԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅՑ ՏՆՆՈՒ ԳՅՄԱՐ

12. Վերջապես, բացի դարձանայանի համար դյուղը նախապատրաստելու այդ բոլոր կարևորագույն խնդիրներից, խրճիթ-ընթերցարանը ցանքի ժամանակ պետք է պայքարի նույնպես ցանքարաներին կուլտուր-լենցադային սաստարկություն կազմակերպելու համար: Չխոսելով իր՝ խրճիթ-ընթերցարանի հոգսերի մասին—ցանքարաներին կուլտուրական հանգիստ և ղվարճություններ ստանդարտ նկատմամբ, անհրաժեշտ է մտուրներ ու մանկական հրապարակներ, այգիներ ու պրիմիտիվներ կազմակերպել, վորպեսզի կարելի լինի կոլտնտեսուհիներին տնային հոգսերից ազատել և կոլտնտեսական աշխատանքի համար, վորքան կարելի յեշատ կանացի բանվորական ուժ ապահովել, հասարակական սնունդ, բժշկական ոգնություն կազմակերպել և այլն:

Խրճիթ-ընթերցարանի ամբողջ աշխատանքի մեջ առանձնահատուկ տեղ պետք է զբաղի առաջիկա դարձան ամենակարևոր խրճիթը—բարձր բերքի համար մղվող պայքարը:


ՀամԿ(բ)ԿԿ-ի Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեն 1933 թ. փետրվարի 3-ի իր վորոշման մեջ ասում է.

«Գարնանացանի կամպանիայի կենտրոնական խնդիրն է բերքատվության առաջադրանքները կատարել լիակատար կերպով, յուրաքանչյուր կոլտնտեսության, յուրիտնտեսության և մենատնտեսի տալով անհրաժեշտ կոնկրետ միջոցառումներ և այդ միջոցառումների շուրջը յայնորեն մասսայական աշխատանք ծավալելով»:

Խրճիթ-ընթերցարանը պետք է իր բոլոր ուժերը հրապարակ բերի լիկվիդացիայի յենթարկելու ցանքարաների և առաջին հերթին կոլտնտեսականների ագրոնոմիական անգրագիտությունը:

Խրճիթ-ընթերցարանը պարտադիր ագրագումիսիմուսի համար պետք է արչով կազմակերպի:

Ագրո-տեխնիկական պրոպագանդը, քաղաքական պրոպագանդի հետ միասին, հանդիսանում է խրճիթ-ընթերցարանի ամենակարևոր պարականությունը: Ագրոմիսիմուսի վերաբերյալ բազմաթիվ բրոշյուրներ են հրատարակվել, յուրաքանչյուր չրջան, յու-



րաքանչյուր մշակույթ ունի իր ազրոմինիմումը: Մենք ազրոմի- նիմումի բոլոր հարցերն այստեղ ընդգրկել չենք կարող, այլ մի- միայն կմասնանշենք բերքատուության բարձրացման համար շըր- ջանների և մշակույթների ամենակարևոր և ընդհանուր միջոցա- ուումները: Այդ միջոցառումները պետութիւնն և սահմանել, և նրանց կատարումը պարտադիր է:

1. Այդ ամենից առաջ այն է, ինչի մասին վոր մենք վերևում խոսել ենք—սերմերի գտումն ու պիտանահանումը, ցանկապատար- ման սահմանված նորմաների պահպանումը:

2. Գանձի սահմանված ժամկետների պահպանումը:

Մենք խրճիթ-ընթերցարանի ազրոպրոպագանդիստներին խոր- հուրդ ենք տալիս հենց ցանքարարների տեղական փորձով ուսում- նասիրել ուշացած ցանքապատարման պատճառած վնասը և վաղ կատարված գարնանացնի պրոպագանդը հիմնել տեղական որի- նակների վրա:

Յուրաքանչյուր բամբակացան, հավանորեն, առիթ է ունեցել համոզվելու, վոր ուշ բամբակ ցանելուց բամբակենին ուշ է հաս- նում և ձյան վաղաժամ տեղումից հաճախ վոչնչանում է:

3. Տեսակավոր սերմեր ցանելը:

«Ներկայի սերմանյութի ընդհանուր փոխարինումը տեսակա- վոր սերմանյութով՝ Միության մեջ կարող է բերքատուութիւնը բարձրացնել, սալով միջին հաշվով մեկ հեկտարից առնվազն մեկ ցենտներ բերք»—ասում է ԽՍՀՄ-ի հողօդկոմ ընկ. Յակովլեվը:

4. Վարած հողերը մաքուր պահելը, պայքար մոլախոտերի և բերքի այլ վնասատուների դեմ:

Բոլոր ազրոկանոնների գործադրութիւնը հնարավորութիւնը կտա վոչնչացնել մոլախոտերը, մեր դաշտերի այդ ամենավոխերիմ- թչնամին:

Մոլախոտերը բերքի ամենակատաղի և ամենագլխավոր թշնա- միներն են, նրանք կոլտնտեսութեան դեմ մղվող պայքարում կու- լակի դաշնակիցները և ոգնականներն են:

Ահա թե ինչո՞ւ կուլակային տարրերն ամեն կերպ նպաստում են, վոր կոլտնտեսութիւնների դաշտերում մոլախոտերը տարած- վեն, սերմերը դտելու և ազրոմինիմումի այլ կանոնների դեմ ա- մեն կերպ ազիտացիա յեն մղում:

Բացի դրանից, բերքի համար մղվող մեր ամբողջ պայքարը վաղ մի արդյունք չի ունենա, յեթե առաջվա նման գուշտերում մո- լախոտեր մնան:

Դաշտերի փչացումը կոլտնտեսութեան կազմակերպական և տնտեսական անդրութեան, նրա կատարած զգվելի աշխատանքի ցուցանիչն է և, իհարկե՝ ցանքարարների մեջ խրճիթ-ընթերցա- րանի կատարած վատ աշխատանքի ցուցանիչն է:

Պետք է դիտենալ, վոր բերքի վնասատուներն ամբողջ Միու- թյան մեջ տարեկան ավելի քան 2 միլիարդ ուրբլու հացի և այլ քարիքների վնաս են հասցնում:

Այդ դումարով կարելի կլիներ միլիոնավոր արակտորներ դնել, մի ամբողջ քաղաք և արդյունաբերութեան մի շարք հեկա- ներ կառուցել:

Ուստի ցանքի համար պատրաստվելով, պատրաստ յեղի՛ր բեր- քի թշնամիների դեմ պայքար մղելու:

Մոլախոտերի, մրիկի, կրծողների, մորեխի և բերքի այլ վնասատուների դեմ մղվող պայքարում կոմյերիտմիութիւնը կա- յուր դեր պետք է խաղա:

Անդրկովկասի կոմյերիտմիութիւնը պետք է մտնի մոլախո- տերի դեմ տեղի ունեցող համամիութենական արշավի մեջ:

Անդրկովկասի կոմյերիտմիութիւնը պետք է գուղատնտեսու- թեան վնասարարների դեմ անխնա պատերազմ հայտարարել:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ ԿՈՒ- ՏԵՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԵՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՍՏՐ ԱՌԱՋԱՎՈՐ ՄԱՐՏՆՉՈՂԸ

5. Ծիշտ և պարտադիր ցանքաշրջանառութիւնը բերքի բարձ- րացման ամենակարևոր լծակներից մեկն է:

«Պետք է ապացուցված համարել, վոր ամենուրեք ցանքաշրջա- նառութիւն մտցնելը կարող է Միութեան մեջ միջին հաշվով բեր- քի հավելում տալ հեկտարին վոչ պակաս, քան մեկ ցենտներ հա- ցահատիկ»—ասում է Միութեան Հողօդկոմ ընկ. Յակովլեվը:

Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, վոր ցանքաշրջանա- ռութիւնը մոլախոտերը վոչնչացնելու և անասնապահութեան ար- դյունավետութիւնը բարձր վորակի խոտերով ապահովելու լավա- դույն միջոցն է, այնպիսի խոտերով, վորոնք կերի միջոցով կաթ- նատուութիւնը բարձրացնում են:

Պետք է ցանքարարներին բացատրել, վոր ցանքաշրջանառու- թիւնը հանդիսանում է իբրև պարտադիր և որենքով սահմանված

կանոն, վորի խախտողները յենթարկվում են իխառ սուժանքի և վորովհետև ցանքախոխութուն չկիրառել՝ նշանակում է պետական հողը փչացնել:

6. Համախիս պարարտանյութերի ճիշտ և հմուտ գործածութունը, աղբը, մոխիրը և արդյունաբերութեան այլ թափթփուկները պարարտացումների համար ճիշտ կերպով ոգտադործելը— բերքատուութունը բարձրացնելու կարևորագույն պայմաններից մեկն են:

Ընկ. Կուլբիչեվը կհի պենսումին սոված իր պեկուցման մեջ այսպես է ասել.

«Առանձնապես ուշադրություն եմ դարձնում անասունների աղբի վրա: Իհարկե, այդ կեղտոտ բան է, սակայն գիտե՞ք, այն արհամարհական վերաբերմունքը, վոր վերջերս արտահայտվել է դեպի այդ աղբը, այլևս հանդարձել չի կարելի»: Չնայած գյուղատնտեսութեան մեջ մեր մտղրած քիմիական պարարտանյութերի քանակի զգալի աճմանը, այնուամենայնիվ աղբով պարարտացումն ունի բացառիկ նշանակություն:

7. Գալտերի բերքատուութունը բարձրացնելու այդ միջոցառումների հետ միասին (վորոնց շարքը մենք գիտակցաբար սահմանափակում ենք միմիայն միջանի կարևորագույններով, յենթադրելով, վոր խրճիթ-ընթերցարանը հատուկ բրոշյուրներով շատ ավելի մանրամասնորեն կծանոթանա ազրոկիսնոններին), անհրաժեշտ է նույնպիսի յեռանդուն պրոպագանդ մղել դոսմինիումի և այն միջոցառումների համար, վորոնք նպաստում են անասնապահության, անդրկովկասյան գյուղատնտեսութեան այդ չափազանց կարևոր ճյուղի բարձրացմանը:

Նախիրն ընդարձակելու հոգսը, չափազանց ցածր մակարդակի վրա գտնվող մեր անասնապահության արտադրողականությունը բարձրացնելու խնդիրը պետք է վոչ միայն անասնապահական շրջաններին սպասարկող խրճիթ-ընթերցարանների, այլև առանց բացառութեան բոլոր գյուղերի ուշադրութեան կենտրոնում լինեն:

Խրճիթ-ընթերցարանները պետք է մատուցանեն անասնապահության հիշտ կերպով իմաստելու և անեցնելու վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ տարածեն, պետք է պայքարեն ճիշտ, որինսակելի կադմակերպված կոլտնտեսական անասնապահական բակերի, խոզանոցների, վոչխարի փարայների, բռչնոցների համար:

Խրճիթ-ընթերցարանները պետք է պայքարեն ակվացման գործի գարգացման համար, անասուններին կանոնավոր կերակրե-

լու և պահելու գործի կազմակերպման համար, մասնաշախան օրացքար կազմակերպեն բարձր կաթնատվությամբ, բարձր կենդանի քաշի, մեծ քանակությամբ բուրդ և միս, հավկիթ ստանալու համար:

Անասնապահութեան և նրա արտադրողականութեան բարձրացման խնդիրների լուծումն ամբողջովին կախված է կերի պրոբլեմի լուծումից:

Այդ պատճառով խրճիթ-ընթերցարանը պետք է ադիտացիա մղի կերի ֆոնդեր ստեղծելու, արատախայրերն ու մարգագետինները չափացնելու, կուլտուրական խոտացանկ կատարելու և սիրտի համար, — կերերի սխուսացումը լայն կերպով և անխտիր բոլոր կոլտնտեսութունները և խորհանտեսութունները մտցնելու համար:

Դրա հետ միասին անհրաժեշտ է մտցնել անասնաբուժական միսինում, այսինքն՝ այն կանոնները, թե ինչպե՞ս պետք է անասուններին հիվանդութուններից հեռու պահել և բժշկել:

Խրճիթ-ընթերցարանը բարձր բերքի համար մղելիք իր ամբողջ պայքարը պետք է հիմնի՝ միջև այժմ գոյութուն ունեցող կոտորակուցիոն սխտեմի վերացման և հանցախտիկը, միսը, յուղն ու պակիրը պետությամբ հանձնելու՝ հարկի ուժ ունեցող ամուր պարտավորությունների վերաբերյալ կառավարութեան չափազանց կարևոր վորոշումը կոլտնտեսականների և մենտոնտեսների մասսաներին բացատրելու հիման վրա:

Կառավարութեան այս միջոցառումը բերքատուութեան բարձրացմանը դարկ կտա: Կոլտնտեսութեանն ու կոլտնտեսականներին նախապես հայտի յե, թե ինչք վորքա՞ն է պարտավոր պետութեանը տալու, նա դիթե, վոր բոլոր ավելցուկները գտնվում են իր արտադրութեան տակ, և, բնական է, նա ամեն կերպ աշխատելու յե բերքատուութեան բարձրացման միջոցով այդ ավելցուկները շատացնել:

Այժմ նա իր հացը կուլակից, վնասարարից և դողից ավելի լավ կպահպանի:

Խրճիթ-ընթերցարանը պետք է բոլոր կոլտնտեսականներին և մենատնտեսներին պարզ հասկացողութուն տա այդ որենքի հսկայական նշանակություն մասին, այն մասին, վոր այդ միջոցները պետութեանը տալը նրանց առաջնակարգ պարտականութեանն է, իսկ բերքի բարձրացումը նրանց ուղղակի շահն է:

Ազրոտեխնիկական պրոպագանդան անհրաժեշտ բարձրութեան վրա դնելու համար, խրճիթ-ընթերցարանը, իբրև ազրոպրոպա-

դանդիստներ, պետք է ոգտագործի վոչ միայն այդ գործի մասնագետներին— գյուղատնտեսներին, անասնաբուժներին, տեխնիկներին (վորոնցից գյուղում շատ քիչ կան և բնավ չեն բազմաբուս բայնորեն գյուղատնտեսական գիտելիքներ տարածելու գործի կազմակերպմանը), այլև գլխավորապես գյուղի բոլոր կուլտուրական ուժերը— ուսուցիչներին, զբաղեա կոմյերիտականներին, փորձարար-ցանքարարներին, լիկկայանների սովորողներին, կին պատգամավորներին, դպրոցականներին, պիոներներին, նախապես կազմակերպելով նրանց ազրոտեխնիկական պատրաստութունը, տալով նրանց բարձր ազրոգոմիխիմոմի լուրջ գիտելիքներ:

Վերևում վոչ այնքան լիակատար կերպով թված քաղաքական խնդիրների և լողուններին, ինչպես և ազրոտեխնիկական խնդիրների շուրջը մասսայական լայն պրոպագանդ և ազրոտացիա ծավալելու համար խրճիթ-ընթերցարանը պետք է ոգտագործի մասսայական աշխատանքի բոլոր միջոցներն ու ձևերը— բրոշյուրները, լրագրերը, բարձր ընթերցանութունը, պլակատները, պատի լրագիրը, օպագրված կամ մեծ տառերով գրված լողունները, զրույցները, զեկուցումները, դասախոսութունները, բեմադրութունները, վոտանավորները, պիեսները, կինո-նկարները, ռադիոն, գյուղատնտեսական ցուցահանդեսները, եքսկուրսիաները, ազրո-գատերը և այլն և այլն:

Ազրոտացիայի բոլոր միջոցներն ու ձևերը թվել չես կարոյ: Դրանք վորքան բազմազան, վորքան նոր լինեն, այնքան բավ: Դրանց ամենատարածվածներից մի քանիսի վրա մենք կանգ կառնենք ստորև, սակայն նախազրուչացնում ենք, վոր չափազանց մեծ սխալ կլինի սահմանափակել միմիայն այդ միջոցների գործադրումով: Ընդհակառակն, խրճիթվարն իր ակտիվ հեա միտան պարտավոր է իր կուլտուրիկներին բոլոր ջանքերն ու ստեղծագործական ընդունակութունները հրապարակ բերել նոր, թարմ և բազմազան ձևեր վորոնելու համար:

Բամբակի, ծխախոսի, թեյի յեվ այգե-բանջարաբուծական օրջանների խրճիթվարներ, ձեով բերեմ այդ օրջաններում ցանքի կամպանիայի խնդիրները լուսաբանող գրականություն յեվ այդ մեակույթների ագրոմիխիմոմը

Այդ խնդիրները կատարելու համար խրճիթվարն ամենից առաջ պետք է՝

1. Խրճիթ-ընթերցարանի շուրջը կուլտուրականների և գարնանացանի կուլտրամակայիներին ամուր ակտիվ համախմբի:

ա) Ցանքի կամպանիայի մասսայական-քաղաքական սպասարկման մեջ քաչի կուլտուրական, կոմյերիտութուն, պիոներ-լիայի բոլոր լավագույն կուլտուրական ուժերը: գյուղական ինտելիգենցիայի ուժերը— գյուղատնտեսին, բժշկին, ուսուցչին, կուլտուրական ցանքարարներին, փորձարարներին, լավագույն, օտուգված, նվիրված կուլտուրականներից զուրս յեկամ ռաջիո-նալիզատորներին:

բ) Ուշադրությամբ հետևի, վոր կուլտակտիվի մեջ դասակարգային թշնամին մուտք չգործի: Յեթե մուտք գործի, ամբողջ աշխատանքը կատալի:

